

ԻՍԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՆԵՐՍՈՅԵԱՆ

ՅԻՍՈՒՍ ՈՒՆԻ* ՉԱՐՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մէկը կարող է օրինական կերպով հարցնել. եթէ աշխարհում չարութեան՝ բաշխումը ցոյց չի տալիս աւտուածային հաւանութիւն կամ անհաւանութիւն, ապա մենք ինչպէ՞ս պէտք է բացատրենք աշխարհում չարութեան առկայութիւնը եւ որ բացայայտ արտայայտումը: Բանի որ սա շատ մեծ եւ կարեւոր հարց է եւ առկայում է մեր նիւթին, չշտապենք եւ յառակեցնենք այն:

Փիլիսոփաները երկար ժամանակ է նշել են, թէ հետեւեալ երեք առաջադրութիւնները միմեանց չեն շարադրում.

1. Աւտուած Ամենափոր է:
2. Աւտուած Ամենաբարի է:
3. Աշխարհում չարիք կայ:

Յիրաւի, եթէ Աւտուած կարող է անել մի բան, ինչ Բնքը ուզում է եւ եթէ Նա անասինան բարի է, ապա ինչու՞ հոգ չի տանում, որ կենդանի եւ զգայուն էակները չտառապեն՝ առանց տառապանքի արժանի լինելու: Անմիջապէս երկու հաւանական պատասխաններ են գծում մարդու մտքի մէջ այս կնճռոտ կացութեան մէջ: Առաջինը այն է, թէ ամբողջ հարցը արհեստական է: Իրականութեան մէջ չարութեան խնդիր չկայ: Միայն թուում է, թէ մենք այդ հարցը ունենք, քանի որ մենք հնարել ենք «Աւտուած» կոչում մի էութիւն, որն էլ, կարծում է թէ ստեղծել է աշխարհը եւ հսկում է այնտեղ եւ նրանում կատարուող ամէն անցողիկ: Հրաժարուիք Աւտոմ հասկացութիւնից, եւ չարի խնդիրը կը լուծուի: Առանց այդ հասկացութեան, աշխարհում անիրաւ տեղը տառապանքների լինելու խնդիրը յօդա կը ցնդի:

Մենք պարզապէս ընդունում ենք, թէ դա է աշխարհի կարգը եւ դա աւարտ է դնում կնճռոտ կացութեանը: (1), (2), (3) առաջադրութիւնների անհաստեղծելիութեան հարցին պատասխանելու երկրորդ կերպը Աւտոմ հասկացութիւնից հրաժարուելը չէ, այլ դրանցից որեւէ մէկը բարեփոխել կամ մեկնաբանել այնպիսի եղանակով, որ այն դարձնի համատեղելի միւս երկուսի հետ: Օրինակ՝ փիլիսոփաները ասել են, թէ չարիք կայ, որովհետեւ Աւտոմ զօրութիւնը անասինան չէ, եւ Նա, Իր նպատակների իրագործման համար, այսպիսով կախեալ է մարդկային համագործակցութիւնից: Ուրիշ փիլիսոփաներ պնդում են, թէ Աւտոմ անասինան բարութիւնը, աշխարհում համատեղելի է չարութեան հետ, բայց մեր մտային տեսողութիւնը հարկ եղած չափով լայն չէ՝ տեսնելու համար, թէ այդ ինչպէս կարելի է: Ունենք էլ պնդում են, թէ պէտք չէ չարը նոյնացնել տառապանքների հետ եւ եթէ մենք մօտիկից քննենք տառապանքների բնոյթն ու հետեւանքը, ապա կարող ենք հասկանալ, թէ ինչու են դրանք թոյլատրում Ամենակարող Աւտոմ կողմից, որը միաժամանակ անասինան բարի է: Աւտոմ քրիստոնէական ըմբռնումը աշխարհի չարութեան հետ հաշտեցնելու ճիգը, ներառեալ նաեւ անմեղների տառապանքը, պատճառ է եղել մի բանի, ինչպէս մենք կարող ենք երբևէ հասնել նախորդ պարբերութիւնից, որը կարելի է բնութագրել իբրեւ աւտուածաբանական տնային ճարտարարուեստ: Ամէն տեսակի գրողներ, հեղինակաւոր, կամ ոչ այդքան հեղինակաւոր, ուսեալ կամ ոչ այդքան ուսեալ, փորձել են այս կամ այն կերպով պատասխանել այս հարցին: Մեր նիւթի կապակցութեամբ մեր

հարցումը հետևելան է: Արդեօ՞ք Յիսուս հեռաքրքրում էր այս հարցով: Պատասխանն է. Յիսուս մի կերպ հեռաքրքրում էր, սակայն Յիսուսի ունեցած չարության տեսությանը չունէր փիլիսոփաների հասկացած իմաստը: Որպէսզի կարողանանք այս հարցի հետ Գալիլիացիների եւ Սիլովամի աշտարակի նկարագրության կապը գնահատել ու տեսնել չարապանց կարեւոր հետևություններ այն իրողության, թէ Յիսուս չարության տեսություն չի բացայայտում, պէտք է նայենք հետևելալ հարցերին:

Ինչպէս մենք տեսանք, որոշ փիլիսոփաներ սառն են, որ այդ հարցը, թէ Աստուած ինչպէս կարող է չար բան թողաւորէլ, մարդու կողմից է յօրինուած, արհեստական ինդիլի է, որովհետեւ, նրանք սառն են, Աստուած ինքնին մարդու հետքն է: Դէմ յանդիմանն այս հաստատումին, նախ եւ առաջ, հաստատացեալի բնական հակադրումը կը լինի գոնէլ փորձելու եւ ներկայացնել Աստծու գոյութեան փաստերը: (Ինչպէ՞ս եւ որ բացատրում աշխարհի գոյութիւնը: Ո՞վ կարող էր նախագծել այսպիսի բարդ մի տիեզերք: Եւ այլն): Սակայն դա խելացի բան չի, որ արուի: Նախ եւ առաջ, Աստծու գոյութեան համոյիչ ապացոյցներ չկան: Եթէ լինէին այդպիսի անհերքելի ապացոյցներ, ապա այսօր ոչ մի յարգարժան անաստուած չէր լինի: Ապացոյցները անօգուտ չեն: Դրանք իրօք ցոյց են տալիս, թէ հաստատ Աստծու գոյութեան անբանական մի երեւոյթ չէ: Բայց դրանք դրականօրէն չեն ապացուցում, թէ Աստուած գոյ է:

Աստուած գոյ է։
Յիւրաքանչէր, անհնարին լինելը, հետեւաբար չգոյութիւնը Աստծու իրականութեան
համար եղած հիմնատոր փաստերից, արդէն աստուածային շնորհի օրինակ է։ Սա մի
օրինութիւն է։ Ինչու? Որովհետեւ, եթէ լինէին այդպիսի ապացոյցներ, ապա մենք
պարտաւոր կը լինէինք՝ Աստծու գոյութեան համար մեր համաձայնութիւնը տալ, որը
կը նշանակէր թէ՛ իբրեւ Աստծու գոյութեան ճանաչումի պայման, մենք պետք է,
դադարեմբ ապառ լինելուց, որ հաստատ պիտի լինէր ասելու, որ մենք պետք է,
դադարեմբ մարդկային էակներ լինելուց։ Բայց դա անհեթեթութիւն է։ Մոտրք առնելի
վարզանքներ։ Ենթադրենք եւ քեզ ապացուցեմ Պիթագորասի թեորեմը, այն
առաջադրութիւնն, թէ ուղղանկիւն եռանկեան ներքնահիպ բառակոսին հաստատ է,
էջերի բառակոսիների գումարին։ Այժմ, եթէ իմ ապացոյցը ներկայացնելուց յետոյ դու
յանտես եւ մերժես տալ քո համաձայնութիւնը, ապա երկու բաներից մէկը կամ
երկունս էլ պետք է ճիշտ լինեն. կա'ւ դու ի վիճակի չես հասկանալ, թէ եւ ինչ են
ասում, կա'ւ դու չես հասկանում այն լեզուն, որով եւ բացատրում են։ Առնուա՞ն
եկիղեան երկրաչափութեան փոփոխակների սահմանում դու ուղղակի ապառ չես ոչ
ասելու ապացոյցին։ Ուստի, դու մի խնայողով գերի եւ Պիթագորասի թեորեմին։ Այլ
նոյն եղանակով, եթէ Աստծու գոյութեան անհերքելի ապացոյցներ լինէին, դու
պարտաւոր պիտի լինէիր քո համաձայնութիւնը տալ այն տեսութեանը, թէ «Աստուած
կայ»։ Սակայն Աստուած ստրուկներ չի ունիւմ, որոնք իրենց գլխում ունեն առնովին
գիտելիք այն նպատակով, թէ Նա այնտեղ է։ Նա ունիւմ է, մարդկային էակներ, որոնք
ապառ կերպով իրեն հաւատան, այսինքն՝ իբրեւ մարդ։ Եթէ Աստծու գոյութեան
անհերքելի ապացոյցներ լինէին, ապա մենք պետք է փոխանակէինք մեր ապառութիւնը
կամ հենց մեր մարդկութիւնը այն ծանօթութեան հետ, որ Նա գոյութիւն ունի, եւ դա կը
լինէր, ինչպէս քիչ առաջ տեսանք, սահմանադրանք անհեթեթութիւն։ Աստծուն
հաւատալը ապառ յանձնառութիւն է։ Դա անվիճելի գիտելիք է։ Դա է պարտաւոր, որ
ամբողջ Սուրբ Գրքում Աստծու գոյութեան ապացոյցի ակնարկ անգամ չկայ։ Իբրաքանչէր

Նոյն այդ պատճառով՝ Յիսուս չունի չափության տեսություն: Իրարանջիր հաստատեալ անձ, որը կանգնած է դէմ յանդիման չարին, չի հարցնում իրեն. ինչպիսի հաշտեցնել անպայմանական բարի, Անձնայօր Աստծոմ կարելի է այս իրողութիւնը հաշտեցնել անպայմանական առարկայ չէր եւ ոչ էլ գոյութեան հետ: Չարը Յիսուսի համար հետաքրքրութեան առարկայ չէր եւ ոչ էլ

պարմանալի մի իրողություն: Չարը եղել է մի հրաւեր՝ կառարելու Աստծու սիրող կամքը: Դա եղել է մի մարտահրաւեր: Եղել է երկրի երեսից մաքրելու մի բան: Դրա համար էլ Նա ապաշխարութեան հրաւիրեց Գալիլիացիներին եւ աշխարհի մնացած մասին: «Եթէ չապաշխարէք - դուք նոյնպէս կը կործանուէք»:

«ՆՈՅՆՊԷՍ»

Սուրբ Նուկասի Աւետարանի մէջ «նոյնպէս», «կործանուել», եւ «ապաշխարել» բառերի իմաստները չարչարում են պատահական դիտողին: Դրանք վճռականօրէն կարեւոր են նախանշանդիր քրիստոնէայի համար: Մենք պէտք է ջանանք հասկանալ դրանք այդ կարգով, անդրադառնալով այն իրողութեանը, որ դրանք մօտիկից միահիստւած են, ուստի ոչ մի մեկնութիւն չի կարելի անել այդ ելքերից մէկի մասին՝ առանց միւս երկու ելքերի ակնարկութեան: Ինչ է «նոյնպէս»ը նշանակում «դուք նոյնպէս կը կործանուէք» արտայայտութեան մէջ: Վստահաբար, այդ մակբայը չի նշանակում, թէ բոլոր նրանք, ովքեր չեն ապաշխարում, պէտք է սպանուն ահաբեկչական գործողութեան հետեւանքով կամ ջախջախուն փլուռղ աշտարակի տակ՝ պատմութեան Գալիլիացիների նման: Որոշ մեկնաբաններ ենթադրել են, թէ Յիսուս Իր մոտում ունէր Երուսաղէմի գրաւումը եւ կործանումը, եւ թէ, խօսելով Գալիլիացիների կոտորածի եւ աշտարակի փլուրման մասին, Նա ասում է «նոյնպէս»՝ պոռնչացնելով Իր ունկնդիրներին Սուրբ քաղաքում նման հաւանական վարդապետների մասին:

Դա խելամիտ մեկնութիւն չէ: Ինչպէս մենք արդէն նկատեցինք, Յիսուսի ասացածքների նշանակութիւնը անսխալօրէն է: Դրանք վերաբերում են ամէն մէկին, ամենուր եւ միշտ: Մեր պատմութեան «Դուք»ը միայն Գալիլիացիները չեն կամ Երուսաղէմի կործանման հաւանական փոխերը: Դա մենք բոլորս ենք, եւ «նոյնպէս»ը պէտք է հասկացուի հենց այս իմաստով: Մեր մտքի մէջ ունենալով այս տուեալը, «նոյնպէս»ը կարող է նախ նշանակել, թէ անապաշխար աշխարհը կարող է միայն ուժիւների եւ ուրիշ չարագործութիւնների թառերաւայր լինել: Այս մեկնութիւնը ամբողջական չէ, քանի որ այդ անպատասխան է թողնում անհատ մարդկանց դժբախտութեան հարցը, որոնք թէպէտեւ ապաշխարածներ են, սակայն եւ սցւպէս, պէտք է սպրեն նոյն աշխարհում, որտեղ նրանք ուրիշների հետ միասին, միշտ վնասուելու փութնալի տակ են: Աշխարհում ոչ մէկը ապահովութեան երաշխիք չունի եւ օրէնքը հաւասար խառութեամբ կիրառում է նաեւ նրանց հանդէպ, ովքեր ապաշխարել են: Ուստի մենք կարիք ունենք աւելի լայն դիտակէտի՝ անտեղից նայելու համար խնդրին: Մենք պէտք է հարցնենք, թէ Յիսուս ինչու * է «կործանուել» ասում եւ ոչ՝ «մահանալ»: Բացառապէս պատասխանը հետեւեալն է. չնայած ամէն մարդ մահանում է, բայց միայն նրանք են կործանում, ովքեր չեն ապաշխարում: Եւ ինչպէ՞ս է կործանուելը տարբերում մահանալուց: Կործանուելը կարծես թէ շեշտում է այն իրողութիւնը, թէ Պիղատոսի եւ փլուած աշտարակի փոխերի մահը եղել է.

1. Անակնկալ կերպով:
2. Վայրագ կերպով:

Ուստի, «նոյնպէս» բառը ակնարկում է այն մասին, որ եթէ դուք չապաշխարէք, ձեր սեփական մահը կը լինի անակնկալ եւ վայրագ կերպով:

ԿՈՐԾԱՆՈՒԵԼԸ ՆՈՅՆԸ ՉԷ, ԻՆՉ ՄԱՀԱՆԱԼԸ

Անմիջապես պետք է անդրադառնանք վայրագ կերպով մահանալու կամ չմահանալու հարցին: Հետեւեալ հարցումը պետք է անենք. անհատը ի՞նչ պետք է անի, որպէսզի չկործանուի, այսինքն՝ չմահանայ անակնկալ կերպով: Առաջին հայեացքից, լատ երեւոյթին, այս հարցը անհեթեթ է թուում: Մենք բոլորս ուրիշից կախեալ, ենթակայ արարածներ ենք: Աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, մենք չենք կառավարում: Պարզապէս, որոշ բաներ պատահում են մեզ, եւ մենք չենք մեր մահուան ժամանակը եւ պարագաները ընտրողը եւ ոչ էլ կարող ենք դա ընտրել: Ուստի, ինչպէ՞ս կարելի է ապահովել, որ մեր մահը լինի կամ չլինի անակնկալ կերպով:

«Անակնկալ» բառի տրամաբանութիւնը հնարաւորութիւն է տալիս ապահովելու, որ մենք անակնկալ կերպով չենք մահանայ, եթէ մենք այդպէս նախընտրենք: Որքան, պարզ ճշմարտութիւնն այն է, որ ոչինչ անակնկալ չէ, երբ այն իրականում ակնկալուած է: Մէկը կարող է ինքն իրեն մարդէլ հոգեպէս, միւսը կարող է անձնականացնել իր մահկանացու լինելու իրողութիւնը, մէկն էլ ինքն իրեն պատրաստում է ցանկացած պահին այս աշխարհը թողնելու: Այսպիսի պատրաստուած անձի համար մահը անակնկալ չէ: Սովորաբար, մենք բոլորս ակնկալում ենք մահանալ - սակայն, ոչ հինգ րոպէից, ոչ այսօր, թերեւս ոչ էլ եկող տարի կամ էլ յաջորդ տարիներին: Դա այդպէս էլ պետք է լինի, քանի որ եթէ մեր կեանքի տեսողութիւնը մեզ անորոշ չլինի, ապա մենք որեւէ ծրագիր չենք նախաձեռնի: Սակայն դա կարող է նաեւ լինել մի տեսակ անփութութեան նշան. անդրադարձի պակաս՝ մարդ էակ եղած լինելու ոչ-բաղձալի իրականութեան նկատմամբ: Այսինքն, այն իրողութիւնը, թէ մենք մահկանացու ենք եւ մենք, ի տարբերութիւն կենդանիների, գիտենք այդ ամէնը:

Մենք յաճախ ասում ենք, թէ մահը կեանքի մի մասն է: Սակայն ինչպէ՞ս կարող է մահը լինել կեանքի մի մասը: Ինչպէ՞ս կարող է սէրը լինել սպիտակի մի մասը: Դա հնարաւոր չէ: Սակայն կեանքը մահուան հետ այնպէս չի կապուած, ինչպէս սպիտակը սէրի հետ: Սովորաբար, երբ մենք ասում ենք, թէ մահը կեանքի մի մասն է, դրանով մենք ուզում ենք ասել... այսինքն թէ՛ մարդիկ ծնում են, ապրում են մի որոշ թոով տարիներ եւ ապա մահանում: Նոյն մարդը թէ ապրում է եւ թէ մահանում, որը մեզ համար բնա էլ նորութիւն չէ: Այդ առաջադրութիւնը աւելի օգտաւէտ կերպով կարող ենք հասկանալ, եթէ ասենք՝ մահացածների կեանքը անխուսափելի եւ անմոռանալի կերպով հիշուած է ողջ մահացածների կեանքի հետ, առսել կամ նուազ տեսանելի կերպով: Իբրեւ հետեւանք այժմ մտած իրաքանչիւր անհատի կեանքին, աշխարհը տարբեր է: Բո մեծ պապիկը գոցէ չէր կարող այնքան փոխել աշխարհը, որքան որ Տիգրան Մեծը փոխեց: Գոցէ նոյնիսկ դու՝ իր ծոռիկը, մինչեւ իսկ չգիտես նրա հետ: Բայց բո պապիկը փոփոխութիւն արել է աշխարհում, թէ իսկ չնչին մասնակցով: Եւ որքան մենք գիտենք. Աստուած նրան աւելի է գնահատում, քան թէ Տիգրան Մեծին: Այդ կարեւորութեանն ենք մենք ակնարկում, երբ ասում ենք, թէ Աստուած պահում է իրաքանչիւր անհատի կատարած գործերի արձանագրութիւնը: Բրիտանացիների համար ինչ որ կարեւոր է, այն է, թէ ինչ է գրուած այդ մէկ գրքի մէջ: Եւ ոչ թէ միլիոնաւոր պատմաբանների կողմից գրուած միլիոնաւոր գրքերում:

Մահը կեանքի մի մասն է. սա աւելի հիմնաւոր կերպով նշանակում է, թէ մահանալը մաս է կազմում ապրելուն: Այս իմաստով է, որ Աստուած, որ *կեանք* է, այդուհանդերձ *մահացաւ* իսաչի վրայ: Աստուած Ինքը մահացաւ իսաչի վրայ իբրեւ մարդ՝ Յիսուս Բրիտանացի մէջ: Սակայն մենք ենք Բրիտանացի՝ Իր եկեղեցու անդամները, լինելու մեր հանգանակով: Հետեւաբար, մենք՝ իբրեւ Իր հաւատացեալները, մահանում ենք ինչպէս Ինքը մահացաւ, այսինքն, յարութեան յոյսով:

Ժամանակի տարածքի մէջ անհատի մահը որպէս թէ պատահում է իբրեւ անակնկալ, բայց դա այն պարագային, երբ անհատը պատրաստ չէ մահուան: Անձի մահը անակնկալ չէ, եթէ մարդը պատրաստ է բոլոր պատահումները ընդունել որպէս Աստծու տնօրինութիւն: Մահը ճշմարիտ քրիստոնէային որպէս անակնկալ չի պատահում, յանկարծակի կերպով, որովհետեւ ճշմարիտ քրիստոնէան գիտի, որ մահը մաս է կապմուն կեանքին, ինչպէս քիչ առաջ տեսանք:

Պատրաստ լինել մահանալու՝ նոյնը չէ, մահը անխուսափելի նկատելու հետ: Բացայայտը կրաւորական կերպով եւ դժկամութեամբ ընդունելու կերպը չէ: Սա, Աստծու կամքի հետ գիտակից եւ գործօն կերպով ինքն իրեն ներդաշնակելն է: Ոչ էլ անշուշտ միւս ծայրայեղութեան գնալով. այսինքն՝ չնոսձել, թէ պատրաստականութիւնը նշանակում է մահով մոագրաւում լինել: Մէկը կարող է անխնայ թէթեւամտութեամբ մոռանալ մահկանացու լինելու փաստը, միւսը կարող է այս միտքը իրենից հեռացնել: Ուրիշը սակայն կարող է այն մաս դարձնել իր աստուածատուր եւ աստուածամէտ կեանքին եւ դրա հետեւանքով՝ ապրել խաղաղութեամբ իր՝ անձի եւ իր պատկանած ընկերութեան հետ:

Նոր Կտակարանում կան կրկնուող աղարարութիւններ՝ ընդդէմ անպցունութեան մի անձի կեանքը յարմարեցնելու դրա տեսողութեան անորոշութեան հետ: Մենք բոլորս էլ գիտենք յիմար մարդու պատմութիւնը: Նա, ապահովելով իր համար հանգիստ ապագայ, որոշեց, որ ինքը յայնժամ կարող է անձնատուր լինել անհոգ կեանքի, ուտի, խմի եւ ուրախութիւն անի - անտեղեակ, թէ հենց այդ գիշեր իր հոգին իրենից պահանջուելու էր: Ապա կան հինգ յիմար կոյսերը: Նրանք բառական խելացի չէին, որպէսյի հարսանիքին բաւարար ձէթով զային, հակառակ, որ գիտէին, թէ պէտք է վառուած ջահերով հետեւէին փեսային դէպի հարսանեաց սրահ: Մինչեւ որ նրանք գնեցին պահանջուած խողր եւ վերադարձան, արդէն փեսան եւ իր խումբը անցել էր, եւ դռները փակ էին: «Տէ՛ր, Տէ՛ր, բաց արա», - նրանք աղերսեցին: Պատասխանը եղաւ. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եւ ձեզ չեմ ճանաչում»: Թէ՛ հարուստ մարդու եւ թէ՛ հինգ կոյսերի յիմարութիւնը նրանց անպատրաստ լինելու մէջ է: Տիրոջը համդիպելու եւ պատրաստ լինելու անհրաժեշտութիւնը մշտապէս Պօղոս Առաքեալի թղթերի յորդորներից մէկն է: Միջնադարեան վանականները սովորութիւն ունէին՝ զանկեր դնելու իրենց բուխարիկների վրայ, որոնք տեսաբար եւ լռելեայն նրանց ասում էին. *memento mori* («յիշի՛ր, որ դու պիտի մահանաս»): Նախանձահմայի քրիստոնէայի համար մահը երբեք անպատեհ չի լինի այն իմաստով, որ նա հաշտուել է սիրող Աստծու նախախնամութեամբ տրուած մահուան հետ:

Պիղատոսի եւ փլումա աշտարակի րոհերի անակնկալ մահը, ինչպէս արդէն տեսանք, պատահեց յանկարծակի եւ վայրագ կերպով: Ընկալեցինք նաեւ քրիստոնէայի տիպարը: Ապաշխարած քրիստոնէայի համար մահը երբեք անակնկալ չի լինի: Մենք փորձեցինք հասկանալ Յիսուսի նախապգուշացրած «նոյնպէս» եպրի նշանակութիւնը եւ այժմ կարող ենք հարց տալ: Օրինակ, ինչպէ՞ս է ապաշխարութիւնը հեռացնում ոչ միայն անակնկալութիւնը, այլ նաեւ սպանութեան վայրագութիւնը կամ մահով կործանուելը:

Վայրագ արարքի վայրագութիւնը ունի իր ենթակայական կողմը: Որոշ իմաստով, ամէն մահ վայրագ է, որքանով որ այն դէմ է ենթակայի աւելի երկար եւ առողջ ապրելու ցանկութեանը: Որպէսյի հասկանանք, թէ ինչ եղանակով կարելի է մեղմացնել այդ վայրագութիւնը, մենք կարող ենք նայել մարտիրոսների մահուան: Հոռմում, երրորդ դարի երեսունական թուականի հալածանքների ժամանակ, Սուրբ Կիպրիանոսը կանչուեց դառաորի առաջ՝ Բրիտանիտեան ուսուցիչ լինելու ամբաստանութեամբ: Կարճ դառաւարութիւնը տեղի ունեցաւ 260 թուականի Սեպտեմբերի 14-ին:

Երրորդություն՝ Ինքնագոյ եւ Ինքնակայ: Սա ամենամոլորեցնող փոխաբերությունն է: Երրորդությունն այն է, որ անմիջապէս որ մենք ընդունենք Աստծուն իբրեւ Սուրբ Երրորդություն, մեր եւ Աստծու միջեւ եղած ամբողջ դատարկ «տարածությունը» կ'անհետանայ: Հաստատմբը արտասանելով, (մասնաւորապէս Հայ Եկեղեցու հայեցակէտից ըմբռնուած) մենք խոստովանում ենք, որ իրականությունը ինքնին մէկ կապում է Աստծու հետ, որքանով որ Սուրբ Երրորդության Երկրորդ Անձը (այսինքն՝ ինքնին Աստուած) դառնում է մարդկային էակ, եւ որն իր կարգին իրեն նոյնացնում է մէկ հետ՝ Եկեղեցու հետ, մեղքերի քառության եւ թողութեան համար, այն արարողութեան ընթացքին, որ Եկեղեցին շատկանշում է, այսինքն՝ Սուրբ Պատարագի ընթացքին: Այս խնաստով է, որ Բրիաւոս, որ ամէն կողմ մեր շուրջն է, թակում է մեր գիտակցութեան դուռը, որպէսզի մենք կարող լինենք պզալու Աստծու թագաւորութիւնը մեր անձերի մէջ:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՉԻ ՎԵՐԱԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄՆ Է

Ինչպէս մենք արդէն տեսանք, մեր նկարագրութեան մէջի՝ «նոյնապէս», «կործանուել» եւ «ապաշխարել» բառերի խնաստները իրար յոսարանում են: Մենք չենք կարող նրանցից որեւէ մէկը յոսարանել՝ առանց միւս երկուսի օգնութեամբ: Մենք անվերջ խօսեցիկ ապաշխարութեան մասին: Ի՞նչ է ապաշխարութիւնը իրականում:

Ապաշխարութիւնը կարելի է բնութագրել իբրեւ անձի վերականգնողականութիւն: Ապաշխարութեամբ անձը ապակենդորոնանում է աշխարհից եւ վերականգնողականում է Սուրբ Երրորդության մէջ: Դրա հետեւանքով նա դառնում է Տիրոջ գործակալ, այսինքն՝ սիրոյ կամ Բրիաւոսակենդորոն սիրոյ (agape)–ի գործադրող: Սուրբ Բրիաւոսակենդորոն է, երբ այն հիմնուած է այն խորին համորման վրայ, որ թէ՛ սիրողը եւ թէ՛ սիրուողը Բրիաւոսի Մարմնի բաղկացուցիչ տարրերն են: Երբ մէկը այսպէս վերականգնողականացած է, ապա այդպիսի անձը պատրաստ է դիմագրասելու բոլոր պատահումներնրը: Մահը, ինքնին, այլեւս վախճանալու բան չէ, այնքան ժամանակ որ, նրանց համար ովքեր պատկանում են Բրիաւոսի Մարմնին, նա օրոյս վախճանին անցքն է մէկ տարածքից դէպի միւսը՝ Սուրբ Երրորդության յատկանշական եւ համապարփակ ներկայութեան մէջ:

Ապաշխարութիւնը մոքի փոփոխությունն է: Ապաշխարութիւնը մոռանող մարդու համար առիթ է հանդիսանում՝ ընտրելու մի ապրելակերպ, յատ աղմկեղծի դասաւորման, որ վայել է մարդկային էակին՝ իբրեւ ամենագոյ Հայր Աստծու մի արարած եւ երեխայ, որն իր Որդու միջոցով ներկայացաւ աշխարհին: Նա յանձն առաւ մահուան ամենապայրազ տեսակի տատարանքը, որպէսզի մէկ՝ մահուամբ տառապողներին, բարձրացնի իրենով յատկաւորէն կատարարող օթեւանները: Բնականաբար, հետեւելով մեր սկզբնական բնադրներին, մենք հակում ունենք ապրել այնպիսի սկզբունքներով ու արժէքներով, որոնք նպաստաւոր են մեր սեփական կեանքի, հանգստի եւ հեղինակութեան համար: Ապաշխարութիւնը այն գիտակցութիւնն է, որ իբրեւ մարդկային էակներ, ի տարբերություն կենդանիների, անդրանցում ենք աշխարհը: Եւ այն սկզբունքները որոնցով մենք ապրում ենք, պէտք չէ առաջնորդում լինեն մեր անսանձային բնադրներով, այլ՝ այդ անդրանցականութեամբ: Ապաշխարութիւնը մարմնի, մոքի, հոգու եւ ոգու ներդաշնակութիւնն է: Դա նշանակում է՝ «ինքն իր հետ շփման մէջ լինել»: Ապաշխարութեան հոգեվիճակի մէջ եղող անձը, որ շփման մէջ է ինքն իր հետ, շփման մէջ է նաեւ Աստծու հետ: Այդ վիճակի մէջ ոչ մարմնի, ոչ մոքի, ոչ ոգու եւ ոչ էլ հոգու կարիքները չեն անտեսում: Աւելին, բոլոր այս կարիքները թէ՛ դատում են եւ թէ՛

լուսաբանում, եւ այսպէս ենթարկում են մեր անդամացականութեան իրականութեանը, որը մեր մասնակցութիւնն է Մարդացեալ Աստծո՝ Յիսուս Բրիաւոտի լինելութեան մէջ:

Ապաշխարութիւնը լինում է Սուրբ Հոգու շնորհով: Հայաստանեայց Եկեղեցին, իբրեւ մէկը միւս տիեպերական, առաքելական եւ սուրբ եկեղեցիներից, հաստատում է, թէ ապաշխարութիւնը կեանքի ընթացքին մէկ անգամուայ փորձառութիւնն է: Ապաշխարութիւնը իբրեւ մոքի, մարմնի, ոգու եւ հոգու վիճակ, մարելու փոանգի մէջ է միշտ: «Ապաշխարած» կամ «փրկուած» անձը մշտական փոանգի մէջ է, որ սխալմանը իր անձի «փրկուած» կամքը ընդունի որպէս Աստծու կամք: Այսպիսի անձի «ապաշխարութիւն»ը եւ կամ «փրկութիւն»ը, մասնաւորապէս, երբ նա մեծ ցանկութիւն ունի այն ցուցադրելու, կարող է նոյնիսկ վերածուել դիւպին հապրոտութեան: Այսպիսի փորձութիւն նկատի առնելով է, որ ապաշխարութեան համար պահանջում է աշայրջութիւն: Աստուած միշտ մեր շուրջն է, սակայն մարդիկ բնութեամբ հակում են քաջութելու Աստծուն: Նրանք Աստծու հետ սրտաց են եւ բացսիրտ էլ մնում են միայն շնորհով, պահմքն, միայն Իր ողորմած անձնանուիրումով: Աստուած ողորմելով է ապրում, ինչպէս Սուրբ Պօղոսի փորձառութեան մէջ, եւ նրանց մէջ, ովքեր ցանկութիւն ունեն իրենց սիրտը բացելու Նրա առաջ: Ապաշխարութեան հոգեւոր հասունութեան մակարդակին հասած անձը իրեն յանձնում է Աստծու կամքին, ինչպէս Նա յայտնուած է Բրիաւոտի մէջ: Այդ անձը դառնում է Նրա գործակալը՝ ապահովելով Սուրբ Հոգուն՝ այն տոկոնութեան համար, որ անհրաժեշտ է նշանակում այս պարտականութեան համար:

Ապաշխարութեան պատկերաւոր մի նկարագրութիւն կայ Հայաստանեայց Եկեղեցու ծիսակարգի մէջ, որ կոչւում է Հրաժարում: Այս արարողութեան ընթացքին հաւատացեալները հաւաքում են եկեղեցում, շրջում են դէպի արեւմուտք, ուր դուռն է, ձեռքերը վար, մինչեւ արմունկը, եւ ափը՝ դէպի ներս ուղղում, եւ ամբողջութեամբ դառապարտում են Սառանային եւ նրա խաբէութիւնները ու պատրանքները, նրա չար խորհուրդները եւ ճանապարհները, նրա չար կամքը, բոլոր չար փորութիւնները, նրա չար իրեշտակներին ու նրա չար կամարարներին: Այսպիսով խլելով բոլոր կապերը չարի հետ, հաւատացեալները շրջում են դէպի արեւելք՝ դէպի խորան, միացնում իրենց ձեռքերը, ձեռնամած արտասանում են Հաւատամքը, ապա խոստովանում գործած մեղքերը: Թէ ինչ է դա խորհրդանշում, չի կարող աւելի պարզ չլինել. հեռու այն դռնից, որը բացում է դէպի փողոց, որտեղ Խառարի Իշխանն է դարան մտել, եւ շրջուել դէպի խորան, որտեղ բնակում է Լոյսի Լոյսը, իսկ Եկեղեցին այն վայրն է, որտեղ կառաքում են այս ներքին փոփոխութիւնները: Այս կերպ, ապաշխարութիւնը անձի ապակենտրոնացման եւ վերակենտրոնացման մի ընթացք է: Այն՝ անձի վերակենտրոնացումն է Սուրբ Երրորդութեան մէջ: Ոչ անհատի եւ ոչ էլ աշխարհի համար փրկութեան ուրիշ տարբերակ չկայ. «Եթէ չապաշխարէք, դուք նոյնպէս կը կործանուէք»:

Անգլերէնից թարգմանեց՝

Յովնան Սարկատազ Բաղդասարեանը